Պարույր Սևակ

Անլռելի զանգակատուն

7

ՂՈՂԱՆՋ ՊՈԼՍԱԿԱՆ

Պոլի՛ս, Պոլի՛ս...
Նախ՝ հունական մի հետերա,
Ապա՝ տիկին Բյուզանդիոնի,
Այնուհետև՝ տաճկած խանում,-
Իսկ իմ նախնին՝ կռվից դարձող
Կնակարոտ մի վետերան,
Որ լեռնակույտ տենչանքի հետ
Մշտախայտանք ծով խանդ ունի,
Եվ ինքն իրեն շվայտելով,
Ցոփ վատնելով
Ու հատնելով՝
Արդեն քանի՛ և քանի՛ դար
Քեզնից բնավ չի կշտանում...
Պոլի՛ս, Պոլի՛ս...
Դու՝ հետերա-տիկին-խանում,
Դու՝ պչրուհի մի կախարդիչ,
Արմավալանջ, նոճեթարթիչ,

Մարմարայի պարեգոտով,
Բոսֆորական կապույտ գոտով,
Մահիկահոնք, արևաչյա,-
Մի ըզգլխիչ սիրավաճառ՝
Դեմքով բարի, իսկ սիրտը չար,
Որ հնազանդ մեր ընտանուց մեզ սառեցնում,
Իր մատներին՝ ուզածի պես՝ մեզ պարեցնում,
Շղթայում էր ոչինչ չարժող մի ժպիտով,
Մի ժպիտով,
Որ շատ շուտով
Պիտի բաշխեր ուրի՛շ մեկին,-
Շա՛տ հասկացող,
Քի՛չ զգացող՝
Անսե՛ր, անկի՛րք - լոկ շահադե՛տ,
Լոկ հաշվարա՛ր - խելո՛ք մի կին,
Որ ո՛չ կարգին մոտն էր տանում,
Ո՛չ էլ գոնե կարգին վանում,
Եվ... մեզանից ամենամեծ հաջողակին,
Որ կարող էր Բյուզանդիոնում դառնալ կեսար,
Դարձընում էր շա՛տ-շա՛տ... միայն խեղճ տնփեսա...
Պոլի՛ս, Պոլի՛ս...
Հազարավոր հայ պապերիս
Նախ՝ բորբոքել շինծու խանդով,
Հետո՝ փորձված հոմանու պես
Տրված նրանց խենթ ափերին
Ու հրայրքի տենդ-տապերին՝
Հյութերն ամեն և արյունը,
Քրտինքը ծով և ավյունը
Քամել ես դու քո արգանդով,
Իսկ երբ նրանք հենց ժառանգից են խոսք բացել,

Դո՛ւ, որ գիտես կատվի նման ցնկնել դյուրին,
Փոխարկվել ես իսկույն ջորու՝
Չորացել ես ու ամլացել...
Պոլի՜ս, Պոլի՜ս...
Քանի՜ անփուտ ու սերտ կորիզ
Քո հողերում մենք ենք թաղել,
Մինչդեռ պտուղն ո՞վ է քաղել:
Քանի՜-քանի՜ հայ սերունդներ
Ցանել են սերմ, ցրել հունդեր
Ու հասցրրել բերք ու բարիք.
Ողջն՝ ուրիշի՜ն, իսկ մեզ՝ կարի՛ք...
Պոլի՜ս, Պոլի՜ս...
Շքեղ ու ճոխ, չքնաղ ու պերճ,
Արծաթակուռ ու ոսկերիզ:
Շուք ենք տվել քեզ դարերով՝
Մեր սրբատաշ սուրբ քարերով,
Մեր անասեղ նուրբ կարերով,
Մեր աչքերի փայլ ու ցոլքով,
Մեր մատների ծով շնորհքով,
Չճարվելիք-չեղած ճարով,-
Մեր քանքարով ու հանճարով
Պճնել ենք քեզ,
Ջուգե՛լ-զուգե՛լ
Եվ ամեն ինչ այլոց ձգել...
Պոլի՜ս, Պոլի՜ս...
Մետաղաթել դու մի հանգույց՝
Մեր պատմության պարանոցին
Բախտի ձեռքով պնդված մանկուց.
Դու՝ անջինջ գիր օրհասական,
Մենք՝ մի ճակատ խեղճ ու դալուկ.

Դու՝ նոր սֆինքս փոքրասիական,
Դու՝ դարավոր մի հանելուկ,
Մենք՝ դարավոր մի առեղծված.
Դու՝ էն գլխից սրբապղծված,
Եղծվա՛ծ,
Կեղծվա՛ծ
Մի չար տաճար,
Իսկ մենք՝ դարձյալ հավատացյալ...
Պոլի՜ս, Պոլի՜ս...
Դու՝ դիվասիրտ-հրեշտակադեմ,
Ներսից՝ գեհեն,
Դրսից՝ եդեմ,
Կերտված ձեռքով մարդակերպար սատանայի...
...Նոր էր պըրծել հայ ջարդը նոր՝
Ադանայի,
Ու 30 000 հոգի հող էր մտել,
Բայց չէր փտել.
Ելդըզ քյոշքի տերն արնախում ու սևանուն
Սալոնիկում իր ձեռքերն էր դեռ լվանում՝
Գահը զիջած զավակներին իր արժանի,
Որ նորաձև եվրոպական տարազի տակ
Առժամանակ ծածկում էին ճանկ ու ժանիք.
Գրավաճառ խանութների ցուցափեղկում
Բուրում էին դեռ հեթանոս արբշիռ բույրեր՝
Կախարդ ձեռքով ամենազոր Վարուժանի
Խառնըվելով Գողգոթայի ծաղիկների հոտին անթով.
Դեռ հրահան իր մատներով Սիամանթոն
Շանթագըրել էր կամենում Կարմիր լուրեր,
Ու Թեքեյանն էր հղանում մի Հարություն հրաշալի,-
Երբ Կոմիտասն այստեղ եկավ՝

Բո՞ւյն գտնելու,
Թե՞... արթմնի քուն մտնելու...
Այդ գիշերը, ա՜խ, թող ձգվեր, երկարանար,
Այդ գիշերը թող քարանա՛ր,
Որ չբացվեր բախտորոշիչ օրն այն դժնի,
Ու քեզ հաներ
Պոլիս տաներ...

ՂՈՂԱՆՋ ՆՎԱՃՄԱՆ

Թզուկ ծառերը հեշտ են չորանում
Տաք ու պաղ քամուց,
Քերծվածքից անգամ,
Ճղակոտրումից:
Վիթխարի մայրին կրկին նորանում,
Շիտակվում է շուտ՝
Մինչևիսկ անգութ ճղակտրումից.
Խորունկ նոր վերքին գտնում է նոր ճար՝
Ապաքինվելով բուժիչ այն խեժով,
Որ ուրիշ դեպքում կոչվում է... հանճար:
Եվ ահա նորից նրա թարմ վերքի
Բերանն է գոցվում,
Ու բացվում նրա բերանփակ հոգին,
Ու բացվում այնպե՛ս,
Որ բնաշխարհի զովի ու շոգի
Հարություն տվող շունչն է զգացվում
Պոլսո թաղերում հայրենապապակ:
Բացվում է նրա հոգին բերանփակ
Ադրիականի ու Մարմարայի հեռու ափերին,
Եվ ինքնամոռաց-ցնծուն ծափերի

Որոտից մի պահ
Ծովերն իսկ հպարտ
Ուռչում են թեպետ, զարկվում ափերին.
Բայց... մի այնպիսի՛ հարվածով զգույշ,
Բայց այնպե՛ս անձայն, համրացած այնպե՛ս,
Ինչպես... նկարին Այվազովսկու...
Մի հայ վարդապետ՝
Ո՛չ միայն անզեն,
Մինչևիսկ առանց խաչ ու արծաթի,
Եկել էր՝ նորից Պոլիսն առնելու,
Եվ անառ Պոլիսն իսկապես առավ,
Բայց ոչ թե իբրև գյոռբագյոռ Ֆաթիհն՝
Ահեղ հորդայի սանձը ձեռներում,
Ջենքով ու զորքով,
Բարբարոս ձեռքով
Կրակի մատնած հյուսիս ու հարավ:
Նա անառ Պոլիսն իսկապես առավ,
Վերագրավեց, միայն թե... երգո՛վ.
Մի երգչախմբով ամենասասան,
Որ նա՝ գողթնեցուց սերված երգասան,
Խորին խորհրդով կոչել էր Գուսան.
Մի երգչախմբով, ուր ձուլվել էին
Շուրջ երեք հարյուր պարման ու կուսան.
Մի խումբ վիթխարի՝
Մասյաց մայիսյան եղեգնուտի պես
Բազմասոսափուն,
Վանա լճի պես ծփան ու ծափուն,
Արաքսից առույգ, Եփրատից հոսան,
Բայց Արագածից շեշտված ու հավաք,-
Շուրջ 300

Հնազանդ, խոնարհ ու հլու զավակ,
Հնազանդ, խոնարհ ու հլու մեկի՛ն,
Որ դաժան կյանքի ահեղ տաժանքով
Իր հայր դառնալու իրավունքն անգին
Փոխել էր դրա լոկ երազանքով,
Եվ հիմա...
Հանկարծ շուրջ 300 սիրելի զավակ՝
Հո՛ր շնչով շնչող,
Հո՛ր ձայնով հնչող.
Մի սի՛րտ, մի հոգի՛, մի կա՛մք, մի արյո՛ւն:
Շուրջ 300՛...
Իսկ ինչո՞ւ երեք:
Հա՛յր սուրբ, վե՛ց էր պետք,
Այո՛, Վարդապե՛տ,
Պետք էր 600՛,
Որ... մեր վեցդարյա ահեղ որբության ամե՛ն մի տարուց
Վեց հարյուր տարի անվերջ շամփուրված,
Փայփայանքից զուրկ ու չհամբուրված
Մեր ժողովրդի մրմուռից գոչեր
Ամե՛ն տարվա դեմ մի՛ անմեղ բերան,
Եվ... ա՛յն քաղաքում, որ շեները մեր
Իր լեզվով ասած՝ դարձրեց վերան՝
Զարդելով սյուներ, ձեղուն ու գերան.
Եվ... ա՛յն քաղաքում, որ վեց դար արբեց
Մեր գինով, արյամբ և արտասուքով,
Մեր հագուստի հետ, մեր մաշկն էլ գոփեց,
Պղծեց ա՛յն, ինչ որ մենք էինք պաշտում՝
Մեր սուրբ սուփրայով կոշիկը սրբեց,
Ոտքերը լվաց մեր հացի տաշտում...
Շուրջ 300՛ պարման ու կուսան՝

Մի համահավաք-բազմամի Գուսան,
Որ առանց մի պուտ արյուն թափելու
Եվ առանց դավի, առանց խաբելու,
Մի դաշնամուրով ու սրինգ փողով,
Վեց հարյուր շուրթով ու ձեռքով մի զույգ,
Թե հարուցելով լաց ու արտասուք՝
Ապա հուզելով, ո՛չ ահ ու դողով,
Թե հարուցելով կանչ ու աղաղակ՝
Ապա ցնծությամբ, ո՛չ թե երկյուղով,-
Առա՛վ-նվաճե՛ց-գերե՛ց մի քաղաք,
Որ մի քաղա՞ք չէր, ոչ էլ տերություն,
Այլ միանգամից երկու մայրցամաք՝
Մի երկկողմանի յանոսյան դիմակ -
Կիսով ասիական ու եվրոպական
Մեկին՝ միջնաբերդ,
Իսկ մյուսին՝ մատույց,
Այստեղ՝ ապական,
Իսկ այնտեղ՝ այտույց...
Եվ նա՛, որ երեկ տիրեց Եվրոպան
Ու հիմա դարձել Ասիան էր գերում,
Նա՛, որ ընկել էր մի հուռթի խոպան
Եվ իր քրտինքով ջրած հերկերում
Ե՛վ խոփ էր ինքը, և՛ լուծ, և՛ ճոպան,
Սերմնացան այնպես՝ ինչպես որ տափան,-
Հիմա թերևըս նա զուր էր ուզում
Պոլսում բաց անել երաժշտանոց.
Չէ՞ որ նա ինքը մի մարդ էր թեպետ,
Հազարի նման մի հայ վարդապետ,
Մի մարդ էր,
Սակայն կարծես մի մարդ էր բազմահատորյա,

Մի մարդ էր,
Սակայն ինքն էր մի ամբողջ կոնսերվատորիա՝
Երգիչ, նվագող,
Խաղեր հավաքող,
Որքան խմբավար՝
Նույնքան ուսուցիչ,
Որքան հնագետ՝
Մեռած խաղերի գաղտնիքը լուծող,
Նույնքան պատմաբան՝
Դարավոր երգի մայրուղին գծող.
Եվ մի երգահան, և մի տաղաստեղծ,
Որի քրտինքի ամեն մի կաթիլ
Դառնում էր նոր երգ ու նոր եղանակ.
Ե՛վ աստվածային մեր Պատարագի մի նոր հեղինակ,
Ե՛վ զավեշտական օպերետայի ուրախ խաղաստեղծ,-
Մի մարդ,
Որ սակայն կարծես թե մարդ էր բազմահատորյա
Մի մարդ,
Որ սակայն ինքն էր մի ամբողջ կոնսերվատորիա...
Եվ ահա նրա կախարդ ձեռքի տակ
Ծերուկ խազերը դառնում են կարծես անլեզու մանուկ,
Որ կամաց-կամաց իր թոթովախոս լեզուն է բանում.
Թո՛ղ որ դեռևս ինչ-որ տեղերում թլիկ է տալիս,
Բայց կանցնի և՛ս մեկ-երկու տարի,-
Էլ հա՞մրը որտեղ, էլ ի՞նչ փակբերան...
Մարմին է դառնում Անուշ օպերան,
Որ էլ հարց չտա հեգնող Ֆիգարոն,
Թե ո՞ւր են հապա Մոսին ու Սարոն...
Մարմին է առնում Անուշ օպերան.
Եվ ժողովրդի

Ընդերքից հուռթի
Միևնույն տարում լույս աշխարհ եկած
Նույն ժողովրդի
Կարեվեր սրտի
Հոգսերից, ցավից, հույսերից երգած,
Նույն հողը հերկած
Սերմնացան երկու
Մեկտեղ են բերում բերքը պանծալի՝
Սիրով գումարում հանճար հանճարի...
Մինչ ինքը այստեղ՝
Արդյոք Բերայի Բանկալթի թաղո՞ւմ,
Արդյոք Իշխանաց կղզո՞ւմ ման գալիս,
Թե՞ քաղաքամերձ չքնաղ Հայգյուղում,-
Մինչ ինքը այստեղ՝
Իր միտքը լողում,
Թողնում է Բերա - Բանկալթի - Պոլիս
Ու հասնում նորից
Ո՞ւր... Էջմիածի՛ն:
Ա՛խ, նրանք այնտեղ հաճախ, շա՜տ հաճախ
Խուց էին մտնում լոկ լուսաբացին,
Իսկ ամբողջ գիշե՛ր...
Եվ ամբողջ գիշեր
Ծերուկ մոկացին...
Ինչպե՞ս չհիշել
Որքան էլ թվա անցած ու հեռու:
Նա ճեմարանի պահակն էր ծերուկ՝
Անտուն ու անտեղ այդ Նախո քեռին:
Նրա մացառփուշ խառնակ հոնքերի
Տեղ-տեղ փլուզված կամարի վրա
Դարսդարսված էին կնճիռներ մռայլ՝

Ամեն մեկն ասես կամարին վայել
Մի-մի ձեղնափայտ, փոքր ու մեծ գերան,
Ու թե ծռմռված վերից ու տակից,
Ապա ճակատի պաղից ու տաքից:
Եվ ամեն անգամ, երբ Նախո քեռին
Իր իսկ մտքերի քամուց սարսվելով՝
Կամարն էր ցնցում քանդված հոնքերի,
Գերաններն անվերջ վեր ու վար թռչում,
Հա՛ ճռճվում էին, բայց չէին փլչում...
Թաղել էր քեռին՝ ինչ ուներ կյանքում,
Թողել հայրենի Սասուն - Մոկս – Շատախ,
Եվ հիմա՝ զրկված տեղից ու տնից,
Մենակ, չորգլուխ՝ պահակ էր վանքում:
Եվ ամեն գիշեր սոսինձ սաների
Կպչուն խնդրանքով և աղաչանքով
Խեղճ Նախո քեռին կամա-ակամա
Դառնում էր կրկին Սասուն - Մոկս - Շատախ՝
Միշտ սկսելով.
-Է՛հ, լաո՛, մատա՛ղ...
Ու նույն աննվազ խոր հառաչանքով
Ամեն օր պատմում Սասնա մի ծռից,
Քուռկիկ Զալալուց, Կեծակե թրից,
Ագռավաքարից
Ու Ծովասարից:
Դիցաբանելով վիպում էր քեռին,
Բայց և վիպածին խորունկ հավատում՝
Ապրում նրանց հետ, նրանց պես դատում,
Նրանց աչքերով սիրում ու ատում:
Վիպում էր քեռին ու երգում տեղ-տեղ.
-Դառնամ զողորմին...

Ազգին ու տոհմին...
Ու նորից վիպում ու երգում հերթով
Իր ծերունական խզված կոկորդով.
-Էնոր լե ծծե՛ր՝ լուսնակ էր ջուխտակ
Մեզի լույս տալու...
Էնոր լե ճակա՛տ՝ մեյդան էր, լաո՛,
Քուռկիկ Ջալալու...
Եվ Նախո քեռու միամիտ մտքով
Ինչպե՞ս անցկենար,
Թե ինչքան գնար՝
Այնքան ավելի հաճախ կհիշեր
Այն խելոք սանից, որ հետո թեպետ
Հագավ սև սքեմ, դարձավ վարդապետ,
Բայց ուշք ու միտքը տվեց երգերի:
Նախոյի մտքով ինչպե՞ս անցկենար,
Թե միշտ հիշվելիս՝ ինքը խեղճ քեռին
Կկանգներ կողքին ինչ-որ... Վազների:
Այո՛, Վարդապետ, վիզը ծռելով՝
Այդ խեղճ ու կրակ անգրագետ քեռին
Կողքից էր նայում գոռոզ Վազներին
Եվ պահանջո՞ւմ էր,
Թե՞ աղաչում էր,
Որ դու քո զորեղ Սասնա ծռեր-ով
Խրատես նրա Նիբելունգներ-ին.
Ձեռքի դեմ՝ բազուկ,
Շուրթի դեմ՝ բերան,
Օպերայի դեմ՝
Քո նոր օպերան...
Քո ժողովուրդը՝ արյան ծովերում,
Նորոգվող վերքի անլուր ցավերում,

Իսկ նրա որդիք՝ պատմության մուժից
Գոռ գոչում էին իրենց հաղթ ուժից,
Կենաց ու մահու պայքարից արդար:
Այստեղ էր ահա, որ Դավթի կողքին
Գալիս էր կանգնում մի Կարմիր Վարդան
Ու հանում էր քեզ Պոլսո Բերայից,
Դեպի Ավարայր ու Տղմուտ կանչում,-
Եվ քո ականջում
Խմբերգն էր հնչում
Այն հերոսական նոր օպերայից,
Որ այս անգամ էլ կոչվում էր Վարդան...

ՂՈՂԱՆՋ ՄՐՑԱՎԱՐՏԻ

Եվ մեկ անգամ հաղթարշավով
Արդեն անցած կես-Եվրոպան,
Այնուհետև նվաճելով սիրտն Ասիայի,
Խլացնելով նեյնիմական ու սազային
Երգացավի ծանրը նոպան՝
Հիմա նորից հրավիրվեց նա Եվրոպա.
Կանչվեց Բեռլին, հետո՝ Փարիզ:
Ականավոր երաժիշտներ ողջ աշխարհից՝
Չմահավա՛ն, բարձրաճաշա՛կ, անմիաբա՛ն.
Միջազգային Ընկերության Համաժողո՛վ:
Եվ սյունազարդ սրահներում լուսաողող
Յուրաքանչյուր ժողովրդի երգ ու խաղից՝
Ջեկուցումներ,
Յուրաքանչյուր ժողովրդի պար ու տաղից՝
Երգ-ցուցումներ:
Իսկ բովանդակ ու բազմազգի Արևելքից՝

Մե՛կը միայն...
Ուրիշները, սրտի դողով,
Ջեկուցման հետ բեմ են հանում
Նվագախո՛ւմբ, պարե՛կ, երգի՛չ:
Իսկ սա՛... ինքը մեկնաբանում,
Ինքն էլ ձեռքը ծոցն է տանում,
Ծոցն է տանում
Ու... դուրս հանում
Օրկեստրի տեղ միայն մի... պարզ ծիրանի փող
Եվ, փոխանակ մենակատար անհատների,
Ինքն է հանձնում իր շուրթերին ու մատներին,
Ու... մի փոքրիկ, փայտե մի փող
Մերթ հնչում է օրկեստրային ամբողջ թափով,
Մերթ՝ դայլայլում ու գեղգեղում,
Մերթ ժայթքում է ու մերթ զեղում,
Մերթ կուտակում ու բարդում է,
Մերթ՝ խենթ հոսքը մատով նեղում,
Ուզածի պես հունից շեղում
Ու վերջում էլ ավարտում է
Ինքը՝ ինչ որ հանգույց կապով,
Իսկ դահլիճը՝ ընդոստ ծափով:
Հետո՝ փողը ծոցն է տանում
Ու վերստին մեկնաբանում,
Եվ մի վայրկյան տալով դադար,
Նորից դառնում մենակատար՝
Ինքն է երգում սրտի ձայնով...
Ա՛խ, Վարդապե՛տ, նորից այնօր
Մտքերից՝ մեզ, աչքերից մուժ դու ցրեցիր,
Աշխարհում մեզ դու պարզերես դարձրրեցիր,
Իսկ ինքդդ քեզ՝

Կրկի՛ն հաղթող մենամարտիկ,
Որ ծափերի տարափի տակ
Ցած է իջնում բեմից մարտի,
Ցած է իջնում,
Որպեսզի նո՛ւյն այդ ձեռքերով,
Իբրև հերոս -
Դեռ կենդանի՛-
Վեր բարձրանա... պատվանդանի...

ՂՈՂԱՆՋ ԸՆԴՀԱՏՎԱԾ

Եվրոպայից նա վերստին սիրով դարձավ
Իր Գուսանին և խազերին,
Իր Անուշ-ի նոր մասերին,
Իր Վարդան-ի գոռ բասերին:
Հնչյուններից պիտի կերտեր մի հուշարձան,
Որ հավասար պիտի լիներ
Իր վեհությամբ Սասնա սարին.
Պիտի երգով ողորմի տար
Բաղդասարին, Սանասարին
Ու նզովեր Մսրա չարին.
Հորովելով Դավիթ տղան
Պիտի մենակ՝
Անեզ-անլուծ՝
Գեղջուկի տեղ գութան քաշեր,
Հետո՝ զորքին հանգիստ թողած,
Մսրա տիրոջ սիրտը խաշեր...
Պիտի՛, պիտի՛...
Վարդապետի
Գիշերածալ վեղարի տակ

Բացվում էին լուսաթաթախ առավոտներ՝
Մեկը մեկից պայծառ ու տաք,
Մեկը մեկից վառ ու հստակ:
Կրծքի ներքո սիրտը թնդուն
Կարծես անվերջ նույնն էր պնդում՝
Երաժշտի՛ր:
Ամենակուլ խորշակի դեմ ու երաշտի՝
Երաժշտի՛ր.
Թշնամու դեմ ահեղացող,
Օղակի դեմ հար նեղացող,
Ընդդեմ նրա երգի, ձայնի , նրա շեշտի՝
Երաժշտի՛ր .
Մինչև մահդ հրաժեշտի՝
Երաժշտի՛ր:
Երաժշտում և դեռ պիտի
Հորդաբխուն երաժշտեր,
Վիշտ երգելով՝ ցրեր վշտեր,
Հույս երգելով՝ հավատ շեշտեր,
Սուտը հերքած՝ ճիշտը ճշտեր,
Բայց... մի ահեղ գիշերվա մեջ
Արյուն հագան կանաչ դաշտեր,
Եվ հույս, հավատ, կյանք ու անուրջ
Օր-ցերեկով հանկարծ դարձան մի վատ երազ.
Օդում կախվեց
Աշխարհակուլ մի պատերազմ...

ՂՈՂԱՆՋ ՏԱԳՆԱՊԻ

Օդում կախվեց աշխարհակուլ մի պատերազմ,
Իսկ գարո՛ւն էր...

Լեռնաշխարհի կատարներին
Ձյունը՝ կիսված պատառների,
Արտասվում էր գլուլ-գլուլ
Շրջանցելով լեռ ու բլուր՝
Առու դարձած
Հոսում էր ցած
Այնքա՜ն սիրած ու չտիրած բարձունքներից,
Եվ խառնելով պուտ-պուտ արցունքն արցունքներին՝
Հովիտներում լացն էր փոխում հեծկլտոցի
Ու գալարքով վիշապ օձի
Ձոր ու կիրճ էր իրեն գցում.
Դառնում էր գետ. մի գետ ելմա՜ն,
Ու չէր գտնում խոսքեր ներման՝
Ծանրը խաբված կնոջ նման...
Ողջ աշխարհում՝
Մահ ու արյուն,
Իսկ գարո՜ւն էր...
Ծաղիկներն են աչքով անում այստեղ-այնտեղ,
Եվ ամեն թուփ, ամեն ցողուն
Դառնում է լար մի յուրովի, դառնում ստեղ՝
Երգուն քամու մատների տակ:
Օրը՝ օրին, և օդն արդեն
Մեղմ է այնպես, հողն այնպես տաք,
Ասես համայն աշխարհով մեկ
Մի մայր բարի, սիրագորով,
Մանուկ հողն է ջերմացրրել
Իր բերանի տաքուկ գոլով...
Մարտե՛ր,
Զարդե՛ր,
Հո՛ւր ու հրդեհ,

Արնակոլոլ հազա՛ր սրտեր,
Իսկ գարո՛ւն էր...
Եվ շողակաթ առավոտներ
Ջինջ ցողով են թրջում ոտներ,
Թավ սաղարթով ծառեր զուգում
Ծաղիկներով ու կանաչով
Պճնում ոչ թե լոկ արոտներ,
Սարահարթեր,
Այլ մինչևիսկ ոտնահարված արահետներ...
Ամենուրեք քույրեր ու մայր
Հարազատի մահ են կոծում,
Իսկ մի թռչուն հիմա՛ր-հիմա՛ր
Ինչ-որ ուրախ երգի համար
Ողջ ժամանակ ձայնն է փորձում...
Ամեն ծառից՝ նոր մի տաղիկ,
Ամեն քարից՝ նոր մի խաղիկ.
Եվ դաշտերում՝ շաղն է շողում,
Ու ծաղիկներ են փողփողում,
Իսկ մի համեստ ծնկածաղիկ
Աշխատում է ոտքի ելնել՝
Մի կերպ շտկել ծռված ցողունն
Ու... ո՛չ մի կերպ չի հաջողում...

ՂՈՂԱՆՋ ՆԱԽՃԻՐԻ

Ծնկածաղկի պես
Մեզ էլ չաջողվեց ոչ միայն նորից
Շտկել վեցդարյա ցողունը մեր կոր,
Այլ բարբարոսի նույն դաժան ձեռքով
Ցողունն այս անգամ արմատից հատվեց.

Հայկական հարցից Թուրքիան ազատվեց
Հայաստան երկրում հայ չթողնելու մի ահեղ ելքով,
Որ ոչ լսված էր, ոչ էլ տեսնըված
Մարդկային ցեղի երբևէ կրած անպատվության մեջ
Եվ մինչև անգամ իրենց՝ թուրքերի
Արյունով հունցված սև պատմության մեջ:
Մի ո՞ղջ ժողովուրդ մեկ-մեկ թրատել,
Մի ամբո՞ղջ անտառ արմատից հատել...
Եվ կույսեր, որոնց ծոցի մեջ լուսե
Լուսնի լույսն անգամ ծածուկ չէր հոսել,
Որ երկչոտ էին, ինչպես եղջերուն,
Որ աննյութ էին, ասես հորինված
Մի հովվերգական վեպի էջերում.
Աղջիկներ,
Որոնք անպարկեշտ բառից ու շոյիչ խոսքից
Երկնքի նման բռնկվում էին շիկնանքով ոսկի.
Ամոթխա՛ծ, մաքո՛ւր, լուսավո՛ր կույսեր,
Որ ֆրանսերեն անգիր գիտեին
Լամարթին, Վիյոն, Ալֆրեդ դը Մյուսե
Եվ անգլերեն
Խենթ Օֆելյայի տրտում երգն էին արցունքով ջրում,-
Օֆելյայի պես այժմ ցնորված՝
Խելագարվածի իրենց ճիչերում
Դարձյա՛լ մոռանալ չէին կարենում ա՛յն դժոխքը սև
Եվ բռնաբարող ա՛յն ասկյարներին,
Ա՛յն ենիչերուն,
Ա՛յն անասունին ասուն, բայց անբան,
Որի բութ գլխի կեղտոտ փոչերում
Եթե խլվլում-շարժվում էր մի բան,
Ապա մարդկային մի՛տքը չէր, օ, ո՛չ,

Այլ... միայն ոճի՞ր:
Մարդի՛կ, որ չունեն մարդկային ոչինչ,
Մարդի՛կ, որ մա՞րդ չեն,
Այլ ավելի շուտ մարդակերպ կապիկ.
Որ յոթ տարին մեկ չեն տեսնում նույնիսկ օճառի երես,
Տասը տարին մեկ չեն փոխում շապիկ,
Եվ սուր բահ է պետք,
Որ մարմինների սև տարթը քերես,-
Հիմա ամենուր
Նորապսակի սուրբ առագաստ են պղծում անպատիժ,
Հայոց մայրերին անում անպատիվ...
Լլկըվողները թող գոռան «հրե՞շ»,
Սակայն ո՞վ գոչի ու լուծի վրե՛ժ,
Թե տղամարդիկ՝
Հեռու և մոտիկ՝
Դարձել են արդեն լեշ ու փորոտիք...
Եվ մարդի՛կ,
Որոնց բիրտ պճեղների քրտնքահոտից
Անգամ հոպոպը իր շունչը կտար,
Ճխլտում էին նույն այդ ոտներով
Մեր մանուկներին դեռ նորատոտիկ,
Մեր մանչուկներին՝ լույսի պես արդար,
Առավոտի պես մաքուր ու գերող,
Գարնան պես բուրող...
Եվ մարդիկ, որոնց աչքերը ճպռոտ
Հիշեցնում էին ոտաց ճանապարհ,
Եվ որոնց միտքը - դավաճանաբար -
Չէր կտրում այնքա՛ն, մինչևիսկ այնքա՛ն,
Որ այդ ճպռումից կարող են փրկվել,
Եթե... լվացվեն օրը մեկ անգամ,-

Միևնույն մարդիկ
Մեր սուրբ մայրերի հանճարներ սնած ծիծն էին փրթում
Եվ՝ չզոհացած սառն ու տաք զենքից՝
Մոր աչքի առջև
Քարերով էին փշրում ու ջարդում
Գանգերը նրա՛նց,
Ովքեր ստեղծում
Ու բանաստեղծում,
Հրաշքներ էին աստծու պես կերտում,
Եվ եթե աստծուց տարբերվում էին,
Ապա այնքանով,
Որ նա անգո էր, իրենք՝ իրական:
Եվ հիմա սակայն
Ձեռքն անասնական
Ընջում էր և այդ տարբերությունը,
Ընջում էր քարով.
Հայոց աշխարհի հայկական քարը
Ջարդում-փշրում էր հայոց քանքարը...
-Ո՛վ արդարություն,
Թող որ ես թքեմ ճակատին քո բաց,-
Գոչել էր մեկը քարերով ջարդված այդ հանճարներից,
Գոչել ո՛չ հիմա,
Այնժամ էր գոչել,
Երբ խուժանն այս նույն
Արյունով հարբած գազանի նման
Դրդվելով միայն վայրենուն հայտնի իր պատճառներից,
Ո՞րերորդ անգամ մոխիր էր թողնում
Մեր արտ ու այգուց, մեր տաճարներից:
Եվ հիմա՛,
Հիմա՛,

Երբ կոտորա՛ծ չէր, երբ ջա՛րդ չէր,
Այլ մա՞հ՝
Մահ համատարա՛ծ և համազգայի՛ն,
Մահ ծերի՛,
Մանկա՛ն,
Խեղճի՛,
Հսկայի՛,
Երբ մահվան մրրիկ,
Երբ մահվան բուք էր,-
Այլևս որտե՞ղ, որտե՞ղ էր թուքը,
Որ արդարության ճակատը փակեր:
Ա՛խ, չորացել էր հայոց աշխարհի բերանն ու բուկը:
Էլ ինչպե՞ս թքել,
Եվ այդ ո՞վ թքեր,
Թե հայոց երկրում էլ մարդ չէր մնում,
Բովանդակ մի ազգ թե կուլ էր գնում
Թուրք յաթաղանի պաղբոց պողպատին,
Հայոց հայալիք Տիգրիս-Եփրատին,
Սև արաբների շեկ անապատին՝
Օ՛րը ցերեկով,
Ո՛չ թե աննկատ:
Եվ ունեցե՞լ էր արդարությունը երբևէ ճակատ:
Օ, ո՛չ, նա ուներ միմիայն քամա՛կ,
Քամա՛կ մի խելոք,
Որ շուռ էր տվել մի բնաջնջվող հինավուրց ազգի՝
Նախապես նրան զրկելով զարկող ու փրկող բազկից:
Ու թե կար ճակատ,
Դա ռուս-տաճկական այն ճակատն էր լոկ,
Որ մոտենում էր՝
Ասես լսելով

Կտրվողների,
Կոտորվողների
Ահավոր ճիչը,
Եվ - մեկ էլ հանկարծ - չգիտես ինչու,
Բռնում էր ճամփան արագ նահանջի՝
Թույլ տալով իջնի
Եվ զարկը վերջին,
Կարծես եղածը դեռևրս քիչ էր...
Եվ սակայն նրանց մեղքն ի՞նչ էր, ի՞նչ էր,
Անաստվա՛ծ աստված,
Ինչո՞ւ էր արվում այնքան անօրեն
Եվ ահեղ մի դատ:
...Կար երկաթուղի,
Որ պիտի անցներ Բեռլինից - Բաղդադ:
Բայց ինչպե՞ս անցներ անապատներով այն արաբական,
Որտեղ կանաչը կայարանների դեմքը չի պատում,
Ու չկան շեներ, ավաններ ու տուն:
-Մեղքը հայի՞նն էր, որ հոժարակամ
Չէր գնում ապրի շեկ անապատում,
Չէր լքում բնիկ հայրական տունը,
Իր բազմադարյան շենն ու ավանը՝
Ամուր Կարինը, անառ Սասունը,
Իր ծոցվոր Մուշը, պտղած իր Վանը...
...Բովանդակ մի դար, դարուց ավելի՛,
Տենչանքն էր կիզում ռուսաց նավերին.
Իրենց ձնառատ ու պաղ հյուսիսում
Երազում էին, կարոտով հիշում
Լուսեղ արևելք, արևոտ հարավ,
Ու խենթ տոփանքի խոսք էին բանում
Այն Դարդանելին՝ պչրուհուն պառավ,

Որ չէր դիմանում
Առանց հոմանու,
Բայց սրանց - ինչո՞ւ- թողնում էր ծարավ,
Նազը՝ նազ, սակայն... Հետո՞, ի՞նչ դառավ,-
Եվ ահա ռուսներն է՛լ չեն դիմանում:
Մեղքը հայի՞նն էր.
Նա թուրքի աչքին այլ բան չէր թվում,
Քան հաջող քամի
Եվ մի առագաստ, որ ինքն է պարզվում
Մոսկովի կայմին...
...Այս շարժիչների թանկ-էժան դարում
Նավթի փոխարեն - ի ցավ խեղճ հայի -
Դեռ Անգլիայում ջուր չէին վառում:
Բոլոր ծովերը՝ նույն Անգլիային,
Մինչդեռ նավթի ծովն, ա՛յ, Մուսուլումն է:
-Եվ մեղքը ո՞ւմն է,-
Իհա՛րկե հայինն...
...Արդեն օսմանյան կավե հսկայի
Ծեփն է ճաքճքվում
Ու մեջքը ճկվում՝
Բանականության տաքուկ շողերից.
Ռումին ու բուլղար, սլովակ ու սերբ
Պոկվել են նրա կավե կողերից:
Նույն աններելի մտքին է հակվում,
Նույն ախտով նաև հայն է վարակվում՝
Իր մասն է ուզում իր իսկ հողերից,
Գրոշ է ուզում իր այն փողերից,
Որ հափշտակել
Եվ ճչալ ուզող բերանն են հետո քացիով փակել:
Ու դժգո՞հ է նա,

Եվ ա՞յդ է ուզում անխոս ակնարկել:
-Ուրեմն պարզ է. նա հանցագործ է,
Եվ պիտի ջնջվեն իր էգն ու որձը:
...Եղունգ են քերծում, պտղունց են մաշում,
Ժայռից վանք կերտում, քարից նուռ տաշում,
Դարպասի աչքին հոնք-կամար քաշում,
Արձան են ձուլում, շինում ապարանք:
-Եվ մեղավոր են այստեղ էլ նրանք...
...Հաշիշ չեն ծխում,
Խմում են գինի,
Ապրում անթալան և առաքինի,
Չեն պահում հարեմ,
Ոչ էլ ներքինի,
Եվ չունեն մոլլա,
Որ կապի չալմա.
Նրանց քեշիշը վեղարավոր է:
-Եվ... մեղավոր են...
...Ձեռքի հետքերը նրանց հայրերի
Կնիք են դրել այս նույն վայրերին՝
Իբրև սեպագիր
Կամ շաղախ ու կիր,
Իբրև շիրմաքար
Կամ որմնանկար,
Իբրև մագաղաթ
Կամ լեռնակ-ջրանցք...
-Եվ ո՞ւմն է մեղքը,-
Իհա՛րկե նրանց...
...Ինչպե՞ս չկտրել այն կոկորդը չար,
Որ ցավից հանկարծ կարող է ճչալ,
Կարող է հայցել փրկություն ու ճար...

...Պիտի ազատվել այն լիրբ աչքից էլ,
Որ երազանքից շողում է պայծառ
Եվ կամ մատնում է ապրած կսկիծը
Ու դրանով իսկ դառնում է պատճառ,
Որ օտարները... լացողին խղճան՝
Տեսնելով նրա աղի արցունքը...
...Ինչպե՞ս չջարդել հանցավոր ծունկը
Եվ այն մեղսակից համառ արմունկը,
Որոնց հենվելով՝ մարդը արնաքամ
-Եվ գազա՛նն անգամ -
Ուզում է դուրս գալ ժանտ գերությունից...
Ուրիշ ավելի հանցավոր բան կա՞:
-Դե եկ, մի՛ ելնի համբերությունից,
Դե եկ, թուրքօղլի՛, ցավից մի՛ վնգա...
...Կյանքում կան բաներ, որոնք չեն քերվում,
Ինչպես չի քերվում արյունը սրտից
Կամ գույնը վարդից:
Կյանքում կան բաներ, որոնք չեն ներվում
Ինչպես դրացուն,
Այնպես էլ համայն մի ժողովրդի:
Չի ներվում և այն,
Ինչը կոչվում է առավելություն...
-Եվ այդ ահռելի հանցանքի դիմաց
Դեռ պահանջում եք ներման վեհությո՞ւն...
...Նրանք գիտեին սիրել ու ատել,
Գիտեին խորհել ու համեմատել,
Խույս տալ ցավերից, դավերից ծպտյալ,
Ծարավել լույսին, արևին ժպտալ:
Թե անսահման էր նրանց տանջանքը,
Անծայր էր նույնքան և անրջանքը:

-Ահա՛ և նրանց ծանր հանցանքը...
...Ունեին նաև մեկ ուրիշ հանցանք,
Որ ահավոր էր:
-Գիտե՞ք, թե որը.
Երբ մարդ ոչ մի կերպ չի կարողանում
Ընդմիշտ մոռանալ մի հիմա՛ր անուն՝
Ի՛ր իսկ անունը և ազգանունը:
-Ի՛նչ հանդգնություն, դուք հասկանո՛ւմ եք...
Եվ նա ուզում է նույնիսկ չդատվե՞լ,
Խուսափել արդար կարգ ու կանոնի՞ց:
Ուրեմըն... պիտի ա՛յլ կերպ ազատվել
Այդ լիրբ անունից և ազգանունից:
Իսկ դա անունն էր մի ամբողջ երկրի,
Ո՛ղջ մի ազգ էր դա կրում ու պահում...
Եվ քաղաքակիրթ այն Եվրոպայում,
Ուր ով ծանոթ էր հայոց հին գրին,
Հայոց պատմությանն ու պատմագրին,
Դառնում էր դոկտոր ու պրոֆեսոր՝
Դեռ օրը նույնիսկ չդարձած կեսօր.
Եվ քաղաքակիրթ այն Եվրոպայում,
Ուր մարդկայնության փութանց նոպայում
Շատերի համար դարձել էր փեշակ
Մեզ երկի՛նք հանել՝
Հային անվանել
Ասիական մթնում գիտության մշակ,
Է՛լ ջահ, է՛լ կերոն, է՛լ միակ փարոս,
Իսկ թուրքին կոչել բիրտ ու բարբարոս՝
Իրենց համեմատ այնքա՛ն վայրենի,
Որ պետք է նրա հողը հայրենի
Վաճառքի հանել

Կամ մեջ-մեջ անել,
Որպեսզի... հողը չմնա խոպան,-
Հիմա լուսավոր այդ նույն Եվրոպան
Առանց շիկնանքի այնտեղ էր հասել,
Որ ժառանգներին Կարմիր սուլթանի
Դասեր էր տալիս՝
Եղեռնի՛ դասեր,
Դասեր նախճիրի՛, բարբարոսության՛ն,
Իրեն պահելով... դերը բոզության:
Այդ նո՛ւյն Եվրոպան
Նման չէ՞ր հապա
Հարբած-արնախում այն թուրք զինվորին,
Որ ձանձրանալով զառերից նարդու
Կամ թուղթ խաղալուց,
Իր թուրը դրած հայ հղի կնոջ սուրբխորան փորին՝
Գրազ էր գալիս, թե ի՛նչ կբերի.
-Աղջի՞կ, թե տղա,-
Եվ մանկաբարձի նշտարի տեղակ
Թուրն էր կատարում կեսարյան հատում...
Իսկ նա կին չէր, ո՛չ, այլ Մայր Հայաստան,
Որի սրբազան ու տաք արգանդում
Մի լույս մանուկ էր սկսում խաղալ,
Մի վահագնակերպ-դավթաղեմ տղա,
Որ հղացել էր փրկության լույսից
Ու սնվել էր մեր անմոռուկ հույսից՝
Այն ճանապարհին, որ դարավոր էր,
Ծանր ու խորդուբորդ:
Բայց Եվրոպան էլ ուներ ճանապարհ
Եվ, որպես ճամփորդ,
Նա.... կռվացըրեց իրար հետ շներ,

Որ իր՝ ճամփորդի բանը հաշողի:
Իրոք. ի՞նչ էլ որ լիներ-չլիներ,
Բայց պակաս չկար շան պես հաչողի:
Եվ այս շնային զզվոտուքի մեջ
Շան թաթերի տակ քիչ մնաց կորչեր
Մի ո՞ղջ ժողովուրդ՝
Բնի՛կ,
Տեղական.
Մազ մնաց դառնար թղթե տեղեկանք
Մի ազգ, որ կուռքեր շատ էր ճանաչել,
Բայց որի... նույնիսկ տոտե՞մը շուն չէր,
Այլ եզը հերկող,
Այլ ջուրը երգող
Եվ ամպրոպածին փողը՝ եղեգան...
Ու երկրագնդի այն ծանոթ մասում,
Որին Հայաստան, Հայք էին ասում
Փարավոններից մինչ Պուանկարեն,
Հիմա Օսմանի թոռները բռի
Վիլհելմ կայսեր հետ ուզեցին քերել
Դարերով հնչող «Հայաստան» բառի
Բոլո՞ր տառերը,
Նրա ապագան,
Մշահոտ ներկան
Եվ մինչև անգամ... անցած դարերը:
Եվ համարյա թե իրոք քերեցին,
Իսկ Գլադըստոն - Ջորջ Լլոյդները
Չխանգարեցի՞ն...